ԿԱՐԻՆԵ ՇԱՀԻԴԱՆՈՎԱ ԻՎԱՆԻ

Ծննդյան տարեթիվ՝ 24.03.1955
Ծննդավայր՝ ԱՀ, քաղաք Բաքու

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Կարինե Իվանի Շահիդանովա**

1962-1972 թվականներին Բաքվում սովորել է համար 160 միջնակարգ դպրոցում:

1972–1977 թվականներին ավարտել է Բաքվում Տուտսիի անվան Ադրբեջանի մանկավարժական համալսարանը:

1980 թվականին տեղափոխվել է ՀՀ քաղաք Երևան:

1980-1984 թվականներին աշխատել է Հայկական ԽՍՀ Մեծամորի համար 2 դպրոցում որպես պատմության և հասարակագիտության ուսուցչուհի:

1985-2000 թվականներին աշխատել է քաղաք Երևանի համար 147 դպրոցում որպես պատմության ուսուցչուհի

1998-2000 թվականներին աշխատել է քաղաք Երևանում Ժամանակակից հումանիտար համալսարանում:

2001-2018 թվականներին դասավանդել է Ռուս–հայկական համալսարանում:

2005 թվականին ստացել է պատմական գիտությունների թեկնածուի աստիճան:

2010 թվականին ստացել է դոցենտի կոչում «Միջազգային հարաբերություններ և համաշխարհային քաղաքականության» ամբիոնում Ռուս–հայկական համալսարանում:

2020 թվականին աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Ընդհանուր պատմության բաժնում: Աշխատում է մինչ օրս:

2017 թվականից մինչ այսօր աշխատում է Մոսկվայի պետական համալսարանի Երևանյան մասնաճյուղում:

Հեղինակ է 2 մենագրությունների, մի տասնյակ գիտական հոդվածների՝ տպագրված հանրապետական և արտասահմանյան հեղինակավոր, այդ թվում՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (ՄԳՇ) ընդգրկված ամսագրերում:

Գիտական զեկուցումներով, դասախոսություններով ու ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի քանի տասնյակ գիտաժողովներում, գիտագործնական սեմինարներում, միջնակարգ և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Արժանացել է մի շարք պատվոգրերի և շնորհակալագրերի երկարամյա դասանավդման համար:

Ամուսնացած է: